<< Սարդարյանշին >>ՍՊԸ

<<САРДАРЯНШИН >>ООО

<<SARDARYANSHIN >>LLC

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

*Պատվիրատու* ՝ ***Աշոցքի համայնքապետարան***

*Պայմանագիր թիվ* ՝ **N ԱՀ-ԳՀԾՁԲ-25/83-1**

*Լիցենզիա N ՔՊԼ-**002546***

**ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների նախագիծ**

**Վանաձոր 2026**

„SARDARYANSHIN" LLC
Armenia, Vanadzor, 147/1-33, Yerevanyan highway
Tel. ☎ (+374 99) 21 11 88, (+374 77) 75 02 23,
e-mail sardaryanshin@gmail.com

„ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ" ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Երևանյան խճ. 147/1, բն.33
Հեռ. ☎ (+374 99) 21 11 88, (+374 77) 75 02 23,
e-mail sardaryanshin@gmail.com

„САРДАРЯНШИН" ООО
Армения, г. Ванадзор, Ереванское ш. дом 147/1, кв.33
Тел. ☎ (+374 99) 21 11 88, (+374 77) 75 02 23,
e-mail sardaryanshin@gmail.com

# ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

*Պատվիրատու* ՝ ***Աշոցքի համայնքապետարան***

*Պայմանագիր թիվ* ՝ **N ԱՀ-ԳՀԾՁԲ-25/83-1**

*Լիցենզիա N ՔՊԼ*-***002546***

*Օբյեկտի անվանումը*՝ **ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղաղանչի բնակավայրի լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների նախագիծ**

*Տնօրեն* ՝____ *Ս.Սարդարյան*

*ՆԳԾ*՝ *Ն.Մխիթարյան*

*Նախագծող* ՝ *արդարյան*

Համաձայնեցված է՝________________

համայնքի ղեկավար Կ.Մանուկյան

**Վանաձոր 2026**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-002546, 2-րդ դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2025-01-31, «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՂ., 147/1, 33

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 31.01.2030թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG17-9C16-9E9E-834F**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-002546-05

*(ներդիրի սերիան, համարը)*

«ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ (ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԵՎ ՀՈՂՄԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՅԱՆՆԵՐ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

08.08.2025թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 31.01.2030թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG7C-EA92-915E-4487**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում

| Գնման առարկայի անվանումը | Տեխնիկական բնութագիր | | Չափման միավորը | Ընդհանուր քանակը նախատեսվում է գնել |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 | 4 |
| Լուսատու ԼԵԴ | Ճանապարհի դասակարգումը | Գլխավոր | հատ | 12 |
| | Երթևեկելի մասի լայնությունը | 3-8մ | | |
| | Շարժման գոտիների քանակը | 2 | | |
| | Մայթերի առկայությունը և լայնությունը | կա | | |
| | Հենասյուների տեղադրման ցանկալի տեղը և տեսքը | Ճանապարհի մեկ կողմից, փողոցի եզրաքարից մինչև հենասյան արտաքին պատի հեռավորությունը 0.6 մ ոչ պակաս | | |
| | Խողովակականգնակի ընդհանուր երկարությունը | 7-8մ | | |
| | Հզորությունը | 50Վտ | | |
| | Սնող լարումը | 220Վ | | |
| | Հաճախականությունը | 50Հց | | |
| | Լույսի հոսքը | Առնվազն 4800լմ | | |
| | Գունային ջերմաստիճանը | 4000Կ | | |
| | Սնուցման աղբյուրը | Էլեկտրամագնիսական դրայվեր | | |
| | Երաշխիքային ժամկետը | 3 տարի | | |
| | Կարգավիճակը | Չօգտագործված | | |
| | Ճանապարհի լայնության դասը և նորմավորվող սահմանները | Ըստ ՀՀՇՆ 22-03-2017 Արհեստական և բնական լուսավորում Աղյուսակ 16 | | |
| | Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջները | Ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված <<Ցածր լարմամբ էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> | | |

**ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար՝** **Կ Մանուկյան**

ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցում



ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի փողոցների լուսավորության
ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման
տեխնիկական առաջադրանք

| Հ/հ | Փողոցի անվանում | Կարգավիճակը, ըստ ՀՀՇՆ 22-03-2017 (գլխավոր, հիմնական, երկրորդային և այլ) | Երկարությունը մ | Լայնությունը մ | Լուսատուների տեսակը* (LED և այլ) | Լուսատուների ենթադրվող քանակը, հատ | Սյուների կարգավիճակը (նոր/առկա) | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին փ 1-ին նրբ | գլխավոր | 150մ | 6մ | LED | 5 | նոր | |
| | 2-րդ փողոց | երկրորդային | 200մ | 6մ | LED | 7 | նոր | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

* 1. Լուսատուների ընտրությունը, այդ թվում նրանց բարձրությունը ճանապարհային պատվածքից և հենասյուների միջև հեռավորությունը, պետք է կատարվի համակարգչային սիմուլյացիոն ծրագրով (DiaLux կամ այլ)՝ ղեկավարվելով ՀՀՇՆ 22-03-2017 ‹‹Արհեստական և բնական լուսավորում›› շինարարական նորմերով, ՀՀ Կառավարության 21.01.2021թ. N77 որոշումով, վերոնշյալ տեխնիկական առաջադրանքի տվյալներով և հաշվարկի արդյունքները՝ համապատասխան աղյուսակներով ու գրաֆիկներով, պետք է ընդգրկվեն նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2. Լուսատուների ընտրության ընթացքում պետք է ղեկավարվել ներքոհիշյալ աղյուսակով:

3. Մի քանի բնակավայրի առկայության դեպքում, անհրաժեշտ է ձևաչափը լրացնել յուրաքանչյուր բնակավայրի համար առանձին՝ հատ-հատ նշելով փողոցները:

| Հ/h | Լուսատուի բնութագրերը | |
|---|---|---|
| 1 | Լուսատվությունը, լմ/Վտ | ≥140 |
| 2 | Հզորության գործակիցը | >0.9 |
| 3 | Գունափոխանցման գործակիցը | ≥70 |
| 4 | Ծառայության ժամկետը, ժամ | ≥35000 |
| 5 | Լարման աշխատանքային տիրույթը, Վ | 150÷250 |
| 6 | Աշխատանքային ջերմաստիճանային տիրու | -25÷ + 50 |
| 7 | Գունային ջերմաստիճանը, Կ | 4000±500 |
| 8 | Պաշտպանվածության դասը | ≥IP65 |
| 9 | Լուսատուի հավաստագրերը | ENEC, TUV, EAC և այլն |

Համայնքի ղեկավար (ստորագրություն և կնիք)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ · МУНИЦИПАЛИТЕТ АШОЦК · ASHOTSK MUNICIPALITY · SHIRAK REGION

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

| ՀՀ | Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
|---|---|---|---|
| 1 | Ավանացանկ: Օգտագործվող փաստաթղթեր: Բացատրագիր | Էլ - 1 | 1 թերթ |
| 2 | Բացատրագիր (վերջ): Լուսատուներին ներկայացվող պահանջներ: Պայմանական նշաններ: Կառավարման վահանի սկզբունքային սխեմա | Էլ - 2 | 1 թերթ |
| 3 | Լուսավորոթյան հենասյուների տեսքեր և չափեր | Էլ - 3 | 1 թերթ |
| 4 | Լուսավորության հենասյուների հիմք: ԻՍՀ հաղորդալարի ամրակցման հանգույցներ | Էլ - 4 | 1 թերթ |
| 5 | Էլեկտրասարքավորումների և նյութերի մասնագիր | Էլ - 5 | 1 թերթ |
| 6 | Տեղանքի հատակագիծ Մ 1:1000 լուսավորության ցանցով | Էլ - 6 | 1 թերթ |
| 7 | Լուատեխնիկական հաշվարկ | Հավելված 1 | |

# ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

| ՆՇԱՆԱԿՈՒՄԸ | Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|
| ՀՀՇՆ 22-03-2017 | «Արհեստական և բնական լուսավորում» | Շինարարական նորմեր |
| ՀՀՇՆ 32-01-2022 | «Ավտոմոբիլային ճանապարհներ» | Շինարարական նորմեր |
| ՀUS ԳՕՍՏ Ռ 58107.1-2021 | «Ընդհանուր կիրառության ավտոմոբիլային ճանապարհների լուսավորություն. Հաշվարկային նորմեր և մեթոդներ» | |
| ԳՕՍՏ 33176-2014 | «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Արհեստական լուսավորությունից հորիզոնական լուսավորվածություն. Տեխնիկական պահանջներ» | |
| ՀՀՇՆ 31-03.01-2014 | «Հատուկ կայանքների էլեկտրամատակարարումներին ներկայացվող տեխնիկական պահանջներ» | Տեխնիկական կանոնակարգ |
| 24 հունիսի 1998 թվականի N 189- ԳՄ | «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոններ» (ԷՍԿ) | |
| 5.407-11 | Էլեկտրասարքավորումների հողակցում և զրոյակցում | Աշխատանքային նախագծեր |
| ՀՀՇՆ 1-3.01.01-08 | Շինարարական արտադրության կազմակերպում | |
| ԳՕՍՏ 12.1.013-78 | ԱԱՍՀ. Շինարարություն, էլեկտրաանվտանգություն. Ընդհանուր պահանջներ | |
| ԳՕՍՏ 12.1.046-85 | ԱԱՍՀ. Շինարարություն. Շինարարական հրապարակների լուսավորման նորմեր | |
| ԳՕՍՏ 12.3.016-87 | ԱԱՍՀ. Շինարարություն. Հակակոռոզիոն աշխատանքներ. | |
| ԳՕՍՏ 12 3 035-84 | ԱԱՍՀ. Շինարարություն. Ներկման աշխատանքներ. | |

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Շինարարության ընթացքում հնարավոր է կատարել փոփոխություններ նախապես համաձայնեցնելով նախագծային կազմակերպության հետ:
2. Շինարարական աշխատանքները կատարող կազմակերպություններին` առանց համապատասխան շահագործ կազմակերպությունների հողային աշխատանքներ չսկսել:
3. Նախագծում կիրառվող սարքավորումների տիպերը կարող են ենթարկվել փոփոխման` պահպանելով նախագծում կիրառված տեխնիկական պարամետրերը:

Նախագիծը իրականացված է ՀՀ տարածքում գործող նորմերի պահանջներով: Աշխատանքները իրականացնել մոնտաժային հարթակների վրա` խստորեն պահպանելով անվտանգության պահանջները:

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հիմք են հանդիսանում

1.Համայնքապետարանի պատվերը
2.Տեղանքի հատակագծերը
3.Տեղազննման արդյունքները

ինչպես նաև համաձայն ՀՀ տարածքում գործող քաղաքաշինական նորմերը և կանոնները:

***Նախագծվող տարածքների նկարագիրը***

Բնակավայրի փողոցը լուսավորում է որպես գյուղական կառուցվածք ունեցող փողոց: Տվյալ փողոցի ճանապարհափողոցային ցանցի լուսատեխնիկական պարամետրերը ընտրվել է համաձայն ՀՀՇՆ 22-03-2017-ի դասակարգման աղյուսակ 16-ի, որպես Գյուղական բնակավայրերի փողոցներ և ճանապարհներ: Բնակավայի նախագծվող լուսավորության ցանցը լուսավորում է թաղամասեր, որոնք կառուցապատված են անհատական բնակելի տներով: Փողոցների լայնքը հիմնականում կազմում է 4-6 մետր: Ճանապարհափողոցային ցանցերի կառուցվածքը հիմնակնում ոչ ստանդարտ երկրաչափությամբ է: Անհատական տներով կառուցված փողոցների կառուցապատման հետևանքով չեն բացառվում նախագծում նշված տեղադիրքերում հենարանների տեղադրման խոչընդոտներ: Նման դեպքերում, կախված իրագործելիությունից, հատակագծում նշված հենամիջյան հեռավորությունը կարող է փոխվել մինչև ±2,0 մ:

***Նախագծային լուծումներ***

Նախագիծը մշակվել է համաձայն ՀՀ տարածքում գործող քաղաքշինական նորմերի և կանոնների: Շինարարական աշխատանքների կազմակերպումը անհրաժեշտ է կատարել ''Օգտագործվող փաստաթղթեր'' ենթավերնագրով նշված բաժնում նշված և ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի հիման վրա: Նախագծում նախատեսված են տեղադրել փողոցային արտաքին լուսավորության LED լուսատուներ: Լուսատուները ընտրել են համաձայն «Light-in-Night Road v.7 » և «DiaLux» սիմուլյացիոն ծրագրով կատարված հաշվարկի:

Մշակվել են տեղադրվող հենասյուների տիպարային լուծումներ, կատարվել են լուսավորվող տարածքների լուսատեխնիկական հաշվարկներ, մշակվել են լուսավորվող տարածքների արտաքին լուսավորության ցանցերի հենասյունների տեղադրման սխեմաններ. հաշվարկվել են լուսավորության ցանցերի կառուցման աշխատանքային ծավալների մասնագրեր :

Նախագծում նախատեսված են H= 7.0 մ բարձրությամբ, L = 1.2 մ թռիչքով և δ= 10° հորիզոնի հանդեպ թեքվածքով բարձակով լուսավորության մետաղական հենասուներ:

Հենասուները տեղակայվում են նախապես բետոնյա շաղափով հողի մեջ ամրացված, մայթեզրից 0.6 մ խորությամբ, պարկուճների մեջ, մետաղական հենասյուները ամրակցվում է պարկուճների հետ եռակցման եղանակով: Պարկուճների ամրապնդման համար հենասյան հիմքին եռակցվում է երեք Ф16 մմ ամրան: *Ընդ որում **հենասյուների երկրորդային հողանցման համար** ամրաններից մեկը նախքան եռակցվելը խորացվում է գետնի մեջ l = 0.7 մ և ծառայում է որպես հողանցիչ:* Բոլոր ոչ կոնտակտային մետաղական էլեկտրահամակցային մասերը, որոնք կարող են գտնվել լարման տակ անհրաժեշտ է հուսալիորեն ամրակցել հողանցման կամ զրոյական քուղին:

Օդային գիծը նախատեսվում է կառուցել ինքնակրող մեկուսացված (СИП-2А) տիպի ալյումինե ջիղերով եռաջիղ հաղորդալարերով, որոնց երրորդ ջիղը հանդիսանում է հողանցման ջիղ:

Շինարարական աշխատանքները <u>ՊԱՐՏԱԴԻՐ</u> պետք է կատարվեն համայնքի ղեկավարի, շահագռգիռ բոլոր կազմակերպությունների կողմից լիազորված անձանց ներկայությամբ` ստորգետնյա կոմունիկացիաները չվնասելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում կառուցվող գծի ուղեգծով կարելի է հատել խանգարող ծառերի ճյուղերը: Ցանկացած կատեգորիայի փողոցների և ճանապարհների համար լուստուների հեռավորության հարաբերությունը նրանց կախման բարձրությանը չպետք է գերազանցի 5 : 1 միակողմանի , առանցքային և ուղղանկյուն տեղադրման և 7 : 1 շախմատաձև տեղադրման ժամանակ : Լուսատուների տեղադրման բարձրությունը գետնի մակերևույթից պետք է լինի ոչ պակաս 6.5 մ- ից: (տե՛ս СН 541-82):

***Լուսատեխնիկական մաս***

Համաձայն ՀՀՇՆ 22-03- 2017 «Բնական և արհեստական լուսավորություն» նորմաների աղյուսակ 16-ի «Գյուղական բնակավայրերի փողոցների և ճանապարհների նորմավորվող ցուցանիշներ », լուսավորվող փողոցները ըստ դասակարգման հանդիսանում են բնական կարուցապատման հիմնական փողոցներ:

Լուսատուների լուսատվության ցուցանիշների ապահովման նպատակով կատարվել են լուսատեխնիկական հաշվարկներ : Կապալառուի կողմից տեղադրվող լուսատուները իրենց տեխնիկական և որակային պարամետրերով պետք է ապահովեն նախագծով նախատեսված հաշվարկներով և լուսատուների տեխնիկական բնութագրով ներկայացված չափորոշիչները, որոնք բերված են սույն նախագում:

***Էլեկտրատեխնիկական հաշվարկներ***

Արտաքին լուսավորության ցանցերի նախագծման ընթացքում կատարվել են էլեկտրատեխնիկական հաշվարկներ: Հաշվարկների տեղական պայմանների գնահատման արդյունքում իրականացվել է էլեկտրասնուցման օպտիմալ կազմածևի և էլեկտրամատակարարման սխեմայի ընտրություն: Էլեկտրամատակարարման ապահովման կարգը սահմանվում է III-աստիճանի: Լուսավորության ցանցերի էլեկտրական սնուցում Լուսավորության ցանցերի էլեկտրական սնուցումը նախատեսվում է իրականացնել համայնքի արդի, ինքնաշեն լուսավորության ցանցերը սնող, գոյություն ունեցող գծերից: Այդ նպատակով նոր նախագծվող ցանցերի համար նախատեսված է նոր լրակազմ կառավարման վահան, որը տեղադրվում են սնուցման հենասյուներրի վրա: Ցանցերին միացման լուծումները տրված են յուրաքանչյուր գծի համար: Լուսաուսատուները ցանցին միանում են ԱՊՊՎ մակնիշի հաղորդալարի միջոցով, որոնք անցնում են մետաղական խողովակի` բարձակի միջով` ճկախողովակով: Տեղադրման բարձրությունները նշված են հենասյան գծագրում (տե՛ս թերթ EL - ): Հենասյուները, բարձակները և մետաղական հեծանները ներկվում են մոխրագույն յուղաներկով երկու անգամ: Հենասյան հիմնամասը` հողում թաղվող հատվածըչի ներկվում հենասյան հողանցման դիմադրությունը նվազեցնելու նպատակով:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցում |
| ՆԳՃ | Ն. Մխիթարյան | | | |
| Նախագծ. | Ն. Սարդարյան | | | |

| | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|
| Էլեկտրոտեխնիկական մաս | ԷԼ | 1 | 6 |
| Անվանացանկ: Բացատագիր (սկիզբ) | SARDARYANSHIN | | |

**Գաբարիտներ, հատումներ, մոտեցումներ**

Կառուցվող հաղորդագծերը պետք է ապահովեն հետևյալ պայմանները՝ լարերի կախման չափը պետք է լինի 0,6 մ -20C-ի, 0,7մ. - 0C-ի, 0,8մ. +20C; 0,9մ. +40C ջերմաստիճանների դեպքում:

Ուղղաձիգ ուղղությամբ հաղորդալարերի հեռավորությունը գետնից պետք է լինեն 5.5 մետրից ոչպակաս

Էլ. հաղորդագծերի հատումները երկաթգծերի և ավտոճանապարհների հետ պետք է իրականացնել համաձայն գործող կանոնների:

Հեռավորությունը /բարձրությունը/՝

- 7մ I և II կարգի ճանապրիներից;
- 6մ III և IV կարգի ճանապարհներից;

Շենքերից և շինություններից Էլ. հաղորդագծերի հորիզոնական հեռավորությունները պետք է ապահովեն նվազագույնը՝ 1,0մ պատշգամբներից, տեռասաններից և պատուհաններից:

0,15 խուլ պատերից: Թույլատրվում է Էլ. հաղորդագծերը անցկացնել արտադրական և տնտեսական կառույցների վրայով, այս դեպքում հեռավորությունը պետք է ապահովի նվազագույնը 2,5մ:

Միևնույն հենասյան վրա մինչև 1կՎ հաղորդալարերի անցկացումը իրականացնել ապահովելով հետևյալ պայմանները՝

- 6-10 (20) կՎ հաղորդագծերը պետք է տեղադրվեն 1կՎ հաղորդագծերից վերև:- բարձրությունը ամենամոտ չմեկուսացված հաղորդագծից +15° ջերմաստիճանի և քամու բացակայության ժամանակ 1,75 մ չմեկուսացված զրոյական հաղորդալարի դեպքում, 1 մ մեկուսացված զրոյական հաղորդալարի դեպքում,
- ընդհանուր հենասյուների վրա երկու և ավել հաղորդագծեր անցկացնելու դեպքում հաղորդագծերի միջև հորիզոնական հեռավորությունը պետք է ապահովի նվազագույնը 0,3մ:
- 1կՎ հաղորդագծի 1կՎ-ից բարձր հաղորդագծերին հատման դեպքում ղեկավարվել ԷՍԿ-ի կանոններով:
- 1կՎ հաղորդագծի 1կՎ հաղորդագծերին հատման դեպքում հաղորդագծերի միջև ուղահայաց հեռավորությունը պետք է ապահովի նվազագույնը 0,3մ:

Տեղանքում նպատակահարմարությունից ելնելով հատակագծում նշված հենասյուների միջև հեռավորությունը կարելի է փոխել ±2,0 մ- ով:

***Անվտանգության պայմաններ***

Կապալառուն պարտավոր է ապահովել շինհրապարակում գտնվող իր աշխատողների համար անհրաժեշտ սանիտարական և հիգիենիկ պայմաններ համաձայն ՀՀ օրենսդրության: Կապալառուն իր միջոցներով պետք է կառուցի և սարքավորի ժամանակավոր հակահրդեհայի նկետեր, ինչպես նաև կազմակերպի հակահիեհային պաշտպանության ծառայություն: Կապալառուն տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ իր միջոցներով պետք է իրականացնի ժամանակավոր ցանկապատ, որը պետք ընդգրկի շինարարական աշխատանքների իրականացման ամբողջ տարածքը: Հասարակական վայրերում գտնվող ցանկապատերի տեսքը պետք է համաձայնեցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Այն պետք է բացառի այլ անձանց մուտքը շինհրապարակ:հետ: Շինարարության ամբողջ ժամանակամիջոցում, մեկնարկի օրվանից մինչև նախնական ակտի ստորագրումը, Կապալառուն պատասխանատու է իրականացված աշխատանքների, շինարարական նյութերի, սարքերի ու սարքավորումների և այլի պահպանության համար: Շինարարության նշված ժամանակամիջոցում տարբեր պատճառներով նրա կրած վնասը ծածկվում է սեփական միջոցների հաշվին, բացառությամբ պայմանագրով նախատեսված դեպքերի:

***Աշխատանքների երաշխիքը***

Կապալառուն պարտավոր է իր հաշվին վերացնել այն թերությունները, որոնք ի հայտ կգան պայմանագրում նշված երաշխիքային ժամկետներում կառույցների շահագործման ընթացքում (աշխատանքների ցանկը և երաշխիքային ժամկետները որոշում է Պատվիրատուն, որոնք զետեղվում են Պայմանագրում): Երաշխիքային ժամանակամիջոցում հայտնաբերված թերությունների մասին Պատվիրատուի և Կապալառուի կողմից կազմվում է համապատասխան երկկողմանի ակտ, որում նշվում են թերությունները, նրանց չափերն ու ծավալները, վերացման ժամկետները:

## Լուսավորության ցանցի կառավարման վահանի սկզբունքային էլեկտրասխեմա




**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր**

— Լուսավորության հենասյուն 45Վտ (Յ1)

— Լուսավորության հենասյուն 25Վտ (Յ2)

— Խարսխային տեղամաս

СИП-2А 2х25+1х35-0.6/1мм — Ինքնակրող մեկուսացված հաղորդալար տիպով և կտրվածքով

ПК х + хх — Հենասյուների միջև հեռավորությունը [պիկոտաժ]

N 1;N2...Nx — Հենասյուների հերթական համարը

| | | | |
|---|---|---|---|
| ՆԳՃ | Ն. Մխիթարյան | | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցում |
| Նախագծ. | Ն. Սարդարյան | | |

| Էլեկտրոտեխնիկական մաս | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|
| | ԷԼ | 2 | 6 |

Բացատրագիր (վերջ): Լուսատուներին ներկայացվող պահանջներ: Պայմանական նշաններ: Կառավարման վահանի սկզբունքային սխեմա

SARDARYANSHIN

## Ղ-2 ՏԻՊԻ ՀԵՆԱՍՅԱՆ ՏԵՍՔ ԵՎ ՉԱՓԵՐ




| Հ/Հ | Անվանումը |
|---|---|
| 1 | Հենասյուն D 108 |
| 2 | Բարձակ |
| 3 | Գլխադիր էլեմենտ |
| 4 | Պարկուճ D 114 |
| 5 | Ամրան D16մմ |
| 6 | Բետոն |

Հանգույց 1




## Բարձակ Բ1-0.8-1.2




Գլխադիր էլեմենտ




## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ




## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Պարկուճների ամրապնդման համար դրանց եռակցվում է երեք Փ16 մմ ամրան: Ընդ որում ամրաններից մեկը (5) նախքան եռակցվելը խորացվում է գետնի մեջ l = 0.7 մ և ծառայում է որպես հողանցիչ:*

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՆԳՃ | Ն. Մխիթարյան | [signature] | | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցում |
| Նախագծ. | Ն. Սարդարյան | [signature] | | |
| Էլեկտրոտեխնիկական մաս | | Փուլ: ԷԼ | Թերթ: 3 | Թերթեր: 6 |
| Լուսավորության հենասյուներ Հ1 և Հ2 | | | | SARDARYANSHIN |

## Հենասյուների հիմքի կտրվածք




*** Փակագծում բերված են Հ-2 հենասյան հիմքի չափերը**

## *Ի Մ Հ տարրերը եվ ամրացումը վերջնամասայինհենասյան վրա*











* ճյուղավորման դեպքում հենասյան վար ավելանում է 2 **CT 70 A** տիպի սեխմանկ և մեկ խարսխային սեխմակ բարձակով

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ի Մ Հ
- Ինքնակրող
- Մեկուսացված
- Հաղորդալար

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՆԳՃ | Ն. Մխիթարյան | [signature] | | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցում |
| Նախագծ. | Ն. Սարդարյան | [signature] | | |
| | | | | Էլեկտրատեխնիկական մաս — Փուլ: ԷԼ; Թերթ: 4; Թերթեր: 6 |
| | | | | Լուսավորության հենասյուների հիմք ԻՄՀ հաղորդալարի ամրակցման հանգույցներ |

SARDARYANSHIN

## Նյութեր և սարքավորումներ

| Դիրք ՀՀ | Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ | ՏԻՊ ՄԱԿՆԻՇ ՍՏԱՆԴԱՐՏ | Չ/Մ | ՔԱՆԱԿ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Փողոցային լուսավորության լուսադիոդային լուսատու 165-240 Վ, 45 Վտ, առնվազն 7020 Լմ, 156 լմ/Վտ և ավել, 4000-5000Կ, IP66, երաշխիք 36 ամիս | | հատ | 5 | |
| 2 | Փողոցային լուսավորության լուսադիոդային լուսատու 165-240 Վ, 25 Վտ, առնվազն 3800 Լմ, 152 լմ/Վտ և ավել, 4000-5000Կ, IP66, երաշխիք 36 ամիս | | հատ | 6 | |
| | Օդային գիծ | | | | |
| 1 | Ինքնակրող մեկուսացված հաղորդալար 2x16+1x25 - 0,66/1 մմ$^2$ ГОСТ 31946-2012 | СИП-2А | Մ | 321 | 315 գ.մ + մոնտաժային |
| | Ինքնակրող մեկուսացված հաղորդալարի ամրացման տարրեր | | | | |
| 1 | Մոնտաժային ժապավեն | F 20 | Մ | 58 | $L_{միջանկյալ}$ = 2 x 1մ<br>$L_{խարսխային}$ = 4 x 1մ |
| 2 | Ճարմանդ | NB 20 | հատ | 58 | |
| 3 | Խարսխային բարձակ | CA 2000.2 | հատ | 12 | |
| 4 | Խարսխային սեխմակ | ЗАН 16-35/1000 | հատ | 12 | |
| 5 | Միջանկյալ կախման կոմպլեկտ | ES 1500 E | հատ | 5 | |
| 6 | Ձգող շրջկապ (СТЯЖНОЙ ХОМУТ) | CSL 180 | հատ | 102 | |
| 7 | Ճյուղավորման ծակող սեխմանկ (16-95/4-35մմ$^2$) | CT 70 A | հատ | 2 | |
| | Լուսատուների սնուցում և կառավարում | | | | |
| 1 | Հաղորդալար 3 x 2.5 մմ$^2$ | АППВ | Մ | 27.5 | $L_1$ -2.5 մ |
| 2 | Ճյուղավորման ծակող սեխմանկ (16-95/1.5-10մմ$^2$) | EP95-13 | հատ | 22 | Լուսատուների սնուցման |
| 3 | Ճկախողովակ Φ 16 մմ | | Մ | 22 | $L_1$ - 2.0 մ |

## Հենասյան նյութերի մասնագիր

| Դիրք ՀՀ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԻՊ ՄԱԿՆԻՇ ՍՏԱՆԴԱՐՏ | Չ/Մ | ՔԱՆԱԿ (մեկ հենասյուն) | ՔԱՆԱԿ (ընդհանուր) | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մետաղական խողովակ 127 x 2.5 | ϕ127 | մ | 1.2 | 13.20 | ГОСТ 10704-97 |
| | | | հատ | 1 | 11 | |
| 2 | Մետաղական խողովակ 108 x 4 | ϕ114 | մ | 7.5 | 82.50 | |
| | | | հատ | 1 | 11 | |
| 3 | Մետաղական խողովակ 48 x 3.0 | ϕ48 | մ | 2 | 22.00 | |
| | | | հատ | 1 | 11 | |
| 4 | Մետաղական թերթ հաստ. 2մմ | | կգ | 0.219 | 2.41 | ГОСТ 19903-90 |
| | | | հատ | 1 | 11 | |
| 5 | Ամրան A300 | | կգ | 3.792 | 41.71 | $L_1$ = 0.80 Մ |
| | | | հատ | 3 | 33 | |
| 6 | Հենասյուների ներկում | | մ$^2$ | 2.43 | 26.73 | |

## Հենասյան հիմքերի հողային աշխատանքներ

| | Անվանումը | Չ/Մ | Հ1 (0.5*0.5*1.1) 48 հենասյուն | | ԾԱՆՈԹՈՒԹ. |
|---|---|---|---|---|---|
| | | | Մեկ հենասյան | Ընդh. | |
| 1 | Բնահողի քանդում ձեռքով IV կարգի | մ$^3$ | 0.275 | 3.03 | |
| 2 | Նախաշերտի լիցք տոփանումով տեղի միասեռ բնահողից (առանց շինարարական աղբի և խճի) 100 մմ | մ$^3$ | 0.025 | 0.28 | |
| 3 | Ավելորդ բնահողի փռում տեղում | մ$^3$ | 0.250 | 2.75 | |
| 4 | Բետոն | մ$^3$ | 0.240 | 2.64 | |

| | | | |
|---|---|---|---|
| ՆԳՃ | Ն. Մխիթարյան | | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցում |
| Նախագծ. | Ն. Սարդարյան | | |

| | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|
| Էլեկտրոտեխնիկական մաս | ԷԼ | 5 | 6 |
| Նյութերի և սարքավորումների մասնագիր | | | |

## Տեղանքի հատակագիծ լուսավորության ցանցով Մ 1:1000




| | | | |
|---|---|---|---|
| ՆԳՃ | Ն. Մխիթարյան | | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցքի և 2-րդ փողոցի լուսավորության համակարգի կառուցում |
| Նախագծ. | Ն. Սարդարյան | | |

| | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|
| Էլեկտրատեխնիկական մաս | ԷԼ | 6 | 6 |

Տեղանքի հատակագիծ
լուսավորության ցանցով Մ 1:1000

SARDARYANSHIN